# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-19/Մ-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

«24» հունվարի 2019թ.

ք.Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտորի ժ/պ Ռ. Հայրապետյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ-ն ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մխիթարյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ Պատվիրատուի և Կատարողի միջև 2018 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-19/Մ-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին պայմանագրով նախատեսված թերթերի և մասնագիտական մամուլի մատակարարման ժամկետը սահմանել սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից, ըստ հրատարակման պարբերականության, մինչև 30.12.2019 թվականը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք.Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտորի ժ/պ ____________
Ռ. Հայրապետյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՀՀ մամուլի տարածման
գործակալություն» ՓԲԸ
ք.Երևան, Սասունցի Դավթի հր.2
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510001986720100
ՀՎՀՀ 00401345

Գործադիր տնօրեն ____________
Ա.Մխիթարյան